ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

*11-11/25*

*17.11.2025թ.*

***Լիցենզիա ՔՊԼ-001139***

**Պատվիրատու՝** Երևանի քաղաքապետարան

**Նախագծային կազմակերպություն՝** «ԾԱՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ

**Տնօրեն՝** Դ. Քարտաշյան

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ ԱՐՑԱԽԻ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 12 ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ՋԵՐՄՈՑԱՏՆԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՆԳԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Երաշխավորվում է ՀՀ քաղաք Երևան Արցախի 4-րդ նրբանցք 12 շինություն հասցեում՝ ջերմոցատնկարանային տնտեսության տարածքում նախատեսվող անգարի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է 182585.50 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

ՏՆՕՐԵՆ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 2 ալբոմից

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական մաս

Գիրք 2- Նախահաշիվ

**Ճարտարապետաշինարարական մաս**

Աշխատանային նախագիծը կատարվել է Երևանի քաղաքապետարանի պատվերով:

Կառուցապատումը նախատեսվում է իրականացնել ՀՀ ք. Երևան, Արցախի 4-րդ նրբանցք 12 շինություն հասցեում՝ ջերմոցատնկարանային տնտեսության տարածքում, անգարի և պահակակետի կառուցման նպատակով:

Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ընթացքում մեր կողմից իրականացվել է նախ պատվիրատուի կողմից ներկայացված նախագծային առաջադրանքի ուսումնասիրություն և ըստ դրա կազմվել է քննարկման ենթակա հարցերի և առաջարանքների փաթեթ: Տեղում իրականացրել ենք հանդիպում ջերմոցատնկարանային տնտեսության աշխատակիցների հետ և ունեցել քննարկում տվյալ հարցերի և առաջարկների վերաբերյալ: Իրականացվել են նաև տարածքի ուսումնասիրություններ՝ տախոմետրական հանույթ, ինժեներական երկրաբանություն և ակնադիտական ուսումնասիրություն:

Ստացած պատասխանների և տվյալների հիման վրա կազմվել են էսքիզային գծագրեր, քննարկման ենթակա առաջարկների և հարցերի փաթեթ և ներկայացվել Երևանի քաղաքապետարան՝ նամակի տեսքով /N-07/10-3 10 07 2025/:

Ջերմոցատնկարանային տնտեսության աշխատակիցների հետ երկրորդ հանդիպման ժամանակ որոշվել է՝

-Աշխատակիցների սպասարկման զոնան տեղափոխել անգարի ներս, իսկ պահակակետը նախատեսել հողամասի մուտքի մոտ՝ ֆունկցիոնալ ճիշտ կազմակերպման համար:

**Անգար.**

Հողամասն ունի ընդհանուր առմամբ քիչ թեքություն դեպի արևմուտք, նիշը ցածրանում է մոտ 1.2 մ-ով:

Նախագծով զրոյական նիշը նախաեսված է պայմանական՝ կառույցի հատակի մակերևույթով, որը հողամասի տարածքի վերին նիշից ունի մոտ 65 սմ բարձրություն:

-Շինությունը ունի 15.88x49.49 մ արտաքին չափեր, 785.900 մԱ ընդհանուր մակերեսով:

-Կոնստրուկցիայի բարձրությունը եզրերում 6 մ է, իսկ գագաթում՝ 8 մ:

-Արտաքին պատերը և տանիքը նախատեսվում է կառուցել 6 սմ հաստությամբ սենդվիչ սալերով:

-Լուսավորությունը ապահովվում է կառույցի եզրերին տեղադրված 8 հատ 6 մ2 մակերես ունեցող պատուհաններով:

-Հատակը իրականացվելու է ամրացված բետոնով (տոպինգ նյութով):

-Երկու ճակատային հատվածներից նախատեսվում է տրանսպորտային միջոցների և մարդկանց համար մուտքի հնարավորություն: Դարպասները տեղադրվելու են դեպի վերև բացվող, շարժական անիվներով, որոնց վրա կլինեն դռներ՝ նաև մարդկանց մուտքը ապահովելու համար:

-Երկլանջ տանիքը նախատեսվում է իրականացնել մետաղական կոնստրուկցիաներով, 10% թեքությամբ, ջրահեռացումը՝ կազմակերպված:

-Ինժեներական երկրաբանության արդյունքում հայտնաբերվել են գրունտային ջրեր, որոնցից կառույցի հիմքերը պաշտպանելու համար իրականացվելու է դրենաժ պահեստի շուրջ:

-Նախագիծը համապատասխանում է ՀՀ սահմանադրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

**Պահակակետ.**

Նախագծով զրոյական նիշը նախաեսված է պայմանական՝ կառույցի հատակի մակերևույթով, որը հողամասի տարածքի վերին նիշից ունի մոտ 15 սմ բարձրություն:

-Շինությունը ունի 7x4.5 մ արտաքին չափեր:

-Շինության ընդհանուր մակերեսը 31.500 մԱ է, որի մեջ նախատեսվում է իրականացնել պահակակետ, սերվերների սենյակ, սանհանգույց, հանգստի սենյակ և նախամուտք:

-Միաթեք տանիքը նախատեսվում է իրականացնել մետաղական կոնստրուկցիաներով, (ֆերմա) 5% թեքությամբ, ջրահեռացումը՝ կազմակերպված:

-Բարձրությունը դիմային հատվածում 3.52 մ է, իսկ հակառակ կողմում՝ 3,08 մ:

-Արտաքին պատերը նախատեսվում է կառուցել 20 սմ հաստությամբ ֆասադային պեմզաբլոկով, իսկ ներքինը՝ 10 սմ հաստությամբ պեմզաբլոկով:

-Նախագիծը համապատասխանում է ՀՀ սահմանադրությանն նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին:

Նախահաշիվ

Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն ՀՀ կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման :

Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ. գները և նորմերը, որոնց վրա կիրառվել են հետևյալ գործակիցները՝

| | |
|---|---|
| - Հիմնական աշխատավարձ | 2.43749 |
| - Մեքենաների շահագործում | 3.04857 |

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության 08.2025թ. ինֆորմացիոն տեղեկագրից, նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները՝

| | |
|---|---|
| - Նյութերի տեղափոխման ծախսեր | 1,0572 |
| - Այլ նյութեր | 1,05 |
| - Պահեստավորման ծախսեր | 1,02 |
| Միջին ամսեկան աշխատավարձի չափ է ընդունվել | 263858 դրամ |
| Նախահաշվում հաշվարկված է նաև՝ | |
| - Վերադիր ծախսեր | 13,3% |
| - Շահույթ | 11% |
| - Ա.Ա.Հ | 20% |

Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Փորձաքննության կենտրոն» ՍՊԸ-ն նշում է , որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:

3. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից **«Փորձաքննության կենտրոն»** ՍՊԸ-ի փորձաքննությունը ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ է, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ:

Փորձագետ՝ Ա.Հարությունյան